ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Ազգային ավանդույթների, արժեքային համակարգի, ընտանիքի դերը սովորողների դաստիարակության գործում»

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Մարտունի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Արփիկ Ռամազյան

ԴՊՐՈՑ՝ «Արծվանիստի միջնակարգ դպրոց»

Բովանդակություն

1.Ներածություն ----------3
2.Գրական ակնարկ ----------4
3.Փորձարարական հետազոտություն ----------10
3.1 Խմբի նկարագիրը ----------10
3.2 Փորձարարական դաս 1----------11
3.2 Փորձարարական դաս 2----------14
4.Վերլուծություն ----------17
5.Գրականաության ցանկ ----------20
6.Հավելված----------21
6.1 Դասապլան 1----------21
6.2 Դասապլան 2 ----------24

Ներածություն

Հոդվածում ներկայացվում է ազգային ավանդույթների, արժեքային համակարգի, ինչպես նաև ընտանիքի և դպրոցի դերը սովորողների անձի ձևավորման և դաստիարակության կազմակերպման գործընթացում: Խոսվում է արժեքային համակարգի՝ որպես սովորողի ուսումնառության և վարքի ուղղորդող բաղադրիչի ձևավորման, ազգային ավանդույթների՝ որպես երեխայի հետաքրքրությունների և հոգևոր պահանջմունքների բավարարման և համակողմանի զարգացման կարևոր պայմանի մասին: Խոսվում է ընտանիքում երեխայի ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, մտավոր դաստիարակության հիմքերի մասին, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերը՝ նրանց անձնային, բարոյական որակները, վարքագիծը, արժեքային կողմնորոշումը: Նշվում է, թե ինչպես կարելի է ազգային, ժողովրդական տոների և խաղերի միջոցով երեխաների մոտ դաստիարակել հարգալից վերաբերմունք միջանձնային հարաբերություններում,պատասխանատվություն աշխատանքային և ընտանեկան ավանդույթների նկատմամբ, սիրո և պարտքի զգացում հայրենիքի հանդեպ:

2.Գրական ակնարկ

Ազգային ավանդույթների, արժեքային համակարգի և ընտանիքի դերը սովորողների դաստիարակության գործում

Հանգուցային բառեր՝ ազգային ավանդույթ, կրթություն, վարք, կողմնորոշում, սովորույթ, բարքեր, տոներ, ընտանիք, դպրոց, ուսուցիչ, բանահյուսություն, ճանաչողական արժեք:

Դեռևս հայ մեծ լուսավորիչ, մանկավարժ Խ. Աբովյանը գնահատելով ազգային ավանդույթների դաստիարակչական դերը, մատնանշում է, որ ամեն մի ուսուցում ու դաստիարակություն պետք է համապատասխանի ժողովրդի ոգուն, վիճակին և պահանջմունքներին: Հայերը՝ «խաղաղության օրերին աշխատասեր են և հեզ, թշնամիների սրերի դեմ՝ արիասիրտ ու համբերատար, մտքի և բարոյական ուժերի զզարգացման մեջ՝ ճոխ ու քնքուշ, ազգային սրբությունների անձեռնմխելիությունը պահպանելիս՝ հպարտ և անընկճելի»[1]: Մեծ լուսավորչի ամեն մի խոսքի ու տողի մեջ ցայտում է բոցավառ սերը դեպի հայրենիքը, նրա բնությունը, անցյալը, պատմական մեծ դեպքերը, մշակույթը, իր ժողովրդի սովորություններն ու ավանդույթները:

Ավանդույթը այն կարևորագույն կատեգորիաներից է, որն առկա է բոլոր ոլորտներում՝ նյութական, քաղաքական, գեղարվեստական, բարոյական, կրթական և այլն: Ազգային ավանդույթները,որպես հայ ժողովրդի նյութական և հոգևոր արժեքներ, բավականին հարուստ ու ինքնատիպ են: Դրանցից են պատմական զրույցները, ժողովրդական բանահյուսությունը, ծեսերը, տոները, տարազը, խաղերը և այլն: «Արժեքները համարվում են մարդու գործունեության ու վարքի կողմնորոշիչ այն դեպքում, երբ նրա մեջ ձևավորված են արժեքային գիտակցությունը, արժեքային հարաբերությունները, դիրքորոշումները: Արժեքային կողմնորոշումը անձի գործունեության և վարքի մեջ որոշակի ուղղվածությունն է դեպի այս կամ այն արժեքը, իսկ յուրաքանչյուր առանձին իրավիճակում անձը ղեկավարվում է արժեքային գիտակցությամբ և արժեքային հարաբերությամբ»[2] :

Ավանդույթը որպես կարևորագույն մանկավարժական արժեք հիմք է հանդիսանում երեխայի համակողմանի զարգացման համար, ձևավորում է հասունացող սերնդի հոգեկերտվածքը՝ միաժամանակ նրանց ներգրավելով սոցիալ–մշակութային հարաբերությունների ոլորտը: Արդի մանկավարժական պրակտիկայում իր ուրույն տեղն ունի ազգային ավանդույթներով իրականացվող

[1] Խ. Աբովյան 1 էջ 52
[2] Խ. Աբովյան 2 էջ 38

դաստիարակությունը: Հայ ժողովուրդը պատմական երկարատև զարգացման ճանապարհին մշակել և արմատավորել է իրեն բնորոշ սովորույթներ, առօրյա կյանքի կանոններ, նորմեր, որոնք, փոխանցվելով սերնդեսերունդ, դարձել են ազգային ավանդույթ և օգտագործվում են որպես նոր սերնդի դաստիարակության կարևոր միջոց: Երեխայի դաստիարակչական աշխատանքում կարևոր է հաշվի առնել ազգային ավանդույթները, սովորույթները, բարքերը, ժողովրդական կենցաղը,յուրաքանչյուր ազգության նկատմամբ ունենալ յուրահատուկ մոտեցում: Երեխայի հետ տարվող դաստիարակչական աշխատանքում անհրաժեշտ է տեղ հատկացնել ազգային առաջադիմական ավանդույթներին: Դաստիարակության արդյունավետության բարձրացման նպատակով ազգային ավանդույթների պահպանումը և կիրառումը կարող են մեծապես նպաստել աճող սերնդի կատարելագործմանը, որը պահանջում է ստեղծագործական մոտեցում, անցյալի մշակույթի նկատմամբ բացառիկ նրբազգացություն, արդիականության սուր զգացողություն: Սակայն ավանդույթներից ոչ բոլորն են պահպանել իրենց դաստիարակչական նշանակությունը: Դժվարությունն այն է, որ ազգային ավանդույթներում տեղ են գտել ոչ միայն առաջադիմական, առողջ հայացքներ, այլև հետադիմական: Եթե դրական ավանդույթները դաստիարակության կարևոր գործոն են և նպաստում են հասարակության առաջընթացին, ապա հետադիմական ավանդույթներն, ընդհակառակը, խանգարում են առաջընթացին, ուստի դաստիարակչական աշխատանքը անհրաժեշտ է կազմակերպել այնպիսի հատուկ ձևերով և մեթոդներով, որ հասարակական հարաբերություններում և ընտանեկան կենցաղում դեռևս պահպանվող վնասակար սովորույթները և ավանդույթները չդառնան տիրապետող նաև ուսումնական գործընթացում:

Նյութական և սոցիալական շատ արժեքներ ժամանակի ընթացքում փոփոխվում են: Որոշ ավանդույթներ, որոնք կարևորվում էին սրանից տասնամյակներ առաջ, այսօր էական արժեք չեն ներկայացնում: Ժամանակի ընթացքում հայացքները, կարծիքները, արժեքները փոփոխվում են: Յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով, որոնք ունեն իրենց արժեքային կողմնորոշումները, նախասիրությունները և պահանջմունքները: Անշուշտ, սովորողների արժեհամակարգի ձևավորման, վաղվա հասարակության անդամի արժանավայել կերպարի կերտման համար դաստիարակության միջոցներն ու հնարները բազմազան են և այն վերահսկելու ճանապարհին անհրաժեշտ է լուծել սովորողի առաջընթացի հետևյալ խնդիրները. ուշադրության կենտրոնացում, համակարգված մտածողության ձևավորում, ընտրություն կատարելու ընդունակություն, շրջապատող միջավայրի պատկերացումների ձևավորում, որոշումներ ընդունելու կարողություն, պատասխանատվության և ինքնուրույնության զարգացում և այլն:

Քանի որ երեխան դեռևս չունի կայացած արժեհամակարգ, առավել հակված է ընդօրինակելու շրջապատին: Այս առումով մեծ է ԶԼՄ–ների դերը, որոնցից հաճախ հնչող ոչ ճիշտ հայերենը, ցածրաճաշակ երաժշտությունը, խաթարված մտածելակերպը, սոցիալական կայքերում հակասոցիալական ու հակազգային արժեքներ քարոզող նյութերը իրենց բացասական ազդեցությունն են ունենում երեխայի արժեհամակարգի վրա: Եթե երեխայի ներկայությամբ ծնողը խրախուսում է դրսից քարոզվող բացասական երևույթները, այդ դեպքում նմանատիպ սոցիալական դիրքորոշումներ ձևավորվելու հավանականությունն ավելի մեծ է լինում, և ընդհակառակը, եթե ծնողը քննադատում է անիմաստ, ոչինչ չտվող հաղորդումները կամ ֆիլմերը, ապա հնարավոր է, որ երեխայի մոտ չձևավորվեն բացասական սոցիալական դիրքորոշումներ: Կարևոր է ծնողների դիրքորոշումը այնքանով, որ խրախուսելով կամ հանդիմանելով՝ նրանք ամրապնդում կամ արգելակում են վարքի տվյալ դրսևորման ձևավորմանը: Արժեքային համակարգի ձևավորման և պահպանման գործընթացում ոչ միայն ընտանիքը, այլև դպրոցն է այն հիմնական վայրը, ուր կոփվում են ապագա քաղաքացու բնավորությունը, բարոյական նկարագիրը, աշխարհայացքը: Ընդ որում ուսուցչի մարդկային և բարոյական նկարագիրը, մանկավարժական կոմպետենտությունը, քաղաքացիական դիրքորոշումը, աշխարհայացքային մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: «Ուսուցչի գաղափարապես աղքատ, կենսականորեն անբովանդակ, դժգույն կերպարը ծնում է անտարբերություն, ձանձրույթ, բարոյական չկողմնորոշվածություն, անհեռանկար երեխայի ձևավորում, որից էլ դեպի կործանարար վարքագիծ, վատ ավանդույթի սաղմնավորում ընդամենը մեկ քայլ է»: Սովորողների արժեքային կողմնորոշման խնդրի լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ազգային ավանդույթների պահպանման և փոխանցման միջոցներ են համարվում ժողովրդական բանահյուսությունը, ազգային խաղերը, ծեսերը, տոները, պարը, տարազը, զրույցը, ծնողի անձնական օրինակը և այլն: Դրանք, որպես մանկավարժական արժեքներ, մեծ նշանակություն ունեն դաստիարակության ողջ համակարգի համար: Օրինակ՝ ժողովրդական բանահյուսության մեջ մարդկանց զգացմունքներն ու մտքերը, պահանջմունքներն ու գաղափարները հանգում են նրան, որ ֆիզիկական աշխատանքը մարդու ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման հիմքն է և անհրաժեշտ գործոնը: «Ժողովրդական բանահյուսության մեջ պատկերված է ժողովրդի կյանքը, նրա

աշխարհայացքը, բարոյագիտական հայացքների համակարգը, ժողովրդակա փիլիսոփայությունը

և գեղագիտական ընկալումները: Բանահյուսությունն ունի ճանաչողական մեծ արժեք, հատկապես բոլոր ժողովուրդների նախապատմական շրջանի կյանքի ժամանակահատվածն ընկալելու առումով »[3]:

Ժողովրդական բանահյուսությունը վկայում է, որ հայ ժողովրդին հատուկ է եղել աշխատասիրությունը, որով էլ պիտի դաստիարակվի երեխան: Ժողովրդական տոների և խաղերիմանկավարժական կարևոր կողմն այն է, որ դրանցում առավել արդյունավետությամբ է գործադրվում դաստիարակության բազմապիսի մեթոդները:

Տոների և խաղերի պրոցեսում կրտսեր սերնդի մեջ դաստիարակվում է հարգալից վերաբերմունք աշխատանքային ավանդույթների նկատմամբ: Ազգային ավանդական տոները կարևոր նշանակություն ունեն նաև բարոյական դաստիարակության համար: Ավանդական տոները (Նոր տարին, Վարդավառը և այլն) իրենց արմատներով կապված են հայ ժողովրդի հավատալիքների ու պաշտամունքների հետ: Օրինակ՝

Նոր տարվա տոնակատարությունը կապված է ընտանեկան հարաբերությունների բարելավման, կյանքի նորացման գաղափարի հետ: Ազգային այս գեղեցիկ տոնը հաստատորեն մտել է ընտանեկան կենցաղի մեջ:

Այսօր գիտության, կրթությանև տեխնիկայի զարգացումը թելադրում է բարոյական արժեքների գլոբալացման գործընթացին բնորոշ երանգավորում: «Գլոբալացումը պայմանավորված է ժամանակակից աշխարհի զարգացմամբ: Այն պետք է դիտարկել ոչ միայն որպես տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային, կրթական, էկոլոգիական, այլ նաև միջազգային ինտեգրմանգործընթաց, որի արդյունքում մարդկությունը դառնում է միասնական և փոխկապակցված» [4]:

Ժամանակակից գլոբալացումն ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն է ունենում մարդու արժեհամակարգի վրա: Այսօր շատ արժեքային պատկերացումներ հիմնովին փոխվել են: Չնայած նրան, որ սոցիալ–մշակութային արժեքները ենթարկվել են որոշակի կանոնակարգման, այնուամենայնիվ հիմնական շեշտադրումն ուղղված է դեռևս օտարամուտ նորամուծություններին: Ինտեգրվելով եվրոպական համայնքին՝ ներմուծվում են եվրոպական

---

[3] Դոլուխանյան Ա. Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն,Եր., «Զանգակ–97», 2008, 268 էջ

4 Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, Ընտանիք և ազգային հոգեբանություն նյութերի ժողովածու, Եր., ՀՀ լուսավորության նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ,1991, 149 էջ:

արժեքներ, որոնք շատ հաճախ չեն համապատասխանեցվում ազգային առանձնահատկություններին, որով էլ խանգարում են ընտանեկան հարաբերությունների նորմալ ընթացքին, մասնավորապես երեխայի դաստիարակությանը:

Այսօր հասարակություն են ներթափանցել մեր ազգին ոչ հարիր արժեքներ, որոնք խաթարում են երեխայի անձի ձևավորման գործընթացը, դաստիարակությունը: Փոփոխությունն ինքնին դրական երևույթ է, սակայն կարևոր է, որ այն լինի բնականոն: Եթե փոփոխությունը տեղի է ունենում այդ համատեքստից դուրս, ապա խաթարվում է արժեքային համակարգը: Նման իրավիճակում խիստ կարևորվում են ավանդական արժեքների պահպանումն ու փոխանցումը սերունդներին:

Սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը, որպես մեծագույն արժեք, որի զարգացմամբ շահագրգռված են և՛ հասարակությունը, և՛ պետությունը: Ընտանիքը սերտորեն կապված է պետության և հասարակության զարգացման հետ և շատ արագ արձագանքում է հասարակության մեջ տեղի ունեցող բոլոր դրական և բացասական փոփոխություններին: Սակայն ընտանիքը միշտ չէ, որ համապատասխանության մեջ է գտնվում տվյալ դարաշրջանի սոցիալ– տնտեսական իրականության հետ: Ընտանեկան ավանդույթների կիրառումը այսօր չափազանց կարևոր է ժամանակակից ընտանիքի բարոյական հատկանիշների ամրագրման և երիտասարդ սերնդի առողջ դաստիարակության տեսանկյունից:

Ընտանիքի հիմնական նպատակը մշակութային արժեքների փոխանցումն է, որով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում վարքագծային նորմեր, իրականացվում երեխայի սոցիալականացման առաջին փուլը, հարմարումը կյանքին:

Ըստ Ղ. Աղայանի, բարոյականության դաստիարակության ակունքներից մեկը աշխատանքն է, որը նյութական և հոգեկան բոլոր հատկությունների աղբյուրն է: Այն անչափ բարերար է ազդում մարդկանց բարոյական դաստիարակության վրա: «Աշխատասիրությունը բոլոր առաքինությունների մայրն է, ինչպես ծուլությունը ծնող է ամենայն մոլորության»: Հետևապես պետք է վաղ հասակից երեխային դաստիարակել աշխատանքային ավանդույթներով, նրան նախապատրաստել աշխատանքային գործունեության համար: Աշխատանքային դաստիարակության, աշխատավոր ժողովրդի լավագույն ավանդույթների մասին Աղայանի հիմնարար դրույթները մարմնավորվել և տեղ են գտել նրա «Մայրենի լեզվի» դպրոցական դասագրքերում և այսօր է՞լ հայ անվանի մանկավարժի

դրույթները աշխատանքային ավանդույթների մասին մեծապես նպաստում են հայեցի կրթություն տվող դպրոցի աշակերտների բարոյական դաստիարակության գործին:

Հասարակության նորմերը, արժեքները, սովորույթները, ծեսերը շատ մեծ դեր են խաղում երեխայի դաստիարակության մեջ: Ընտանիքում են դրվում երեխայի ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, մտավոր դաստիարակության հիմքերը, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերն իրենց անձնային, բարոյական որակներով, վարքագծով, արժեքային կողմնորոշումներով: Յուրացնելով ընտանեկան
մշակութային միջավայրի արժեքները՝ երեխան դառնում է հենց այդ արժեքների կրողը:

Ինչպես հայտնի է, երեխայի արժեքային համակարգը ձևավորվում է դաստիարակության և սոցիալականացման գործընթացում: Ակնհայտ է, որ երկրորդի դեպքում արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում ավելի շատ տարերային ձևով: Այն չի կրում կազմակերպված բնույթ: Դժվար է ապացուցել, որ այդ գործընթացը կառավարելի դարձնելով, կարելի է դրական արդյունքի: Սակայն սովորողների գիտակցության և վարքագծի մեջ «նոր արժեքների» յուրովի ընկալումը կրում է տարասեռ բնույթ, որը կախված է մի շարք գործոններից. այն սոցիալական միջավայրի գաղափարախոսությունից, որտեղ դրանք տարածվում են, տնտեսական և սոցիալական զարգացման օբյեկտիվ գործընթացների բնույթից և այլն:

Այսպիսով՝ երեխայի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է նրա բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական արժեքները, գաղափարները, օրենքները և հասկացությունները ընտանիքը, դպրոցը հնարավորություն են ստանում դաստիարակության բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, էկոլոգիական և այլ գիտելիքներ և վերաբերմունք:

3. Փորձարարական հետազոտություն

3.1 Խմբի նկարագիրը

Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանում սովորում են 27 աշակերտ՝ 12տղա և 15 աղջիկ, և 8-րդ դասարանում 23 աշակերտ՝ 12 աղջիկ և 11 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ:
«Հասարակագիտություն » առարկան 10-րդ դասարանում անցնում են շաբաթական 2 ժամ,իսկ 8-րդ դասարանում 1 ժամ:Աշակերտները սիրով և հետաքրքրությամբ են մասնակցում դասերին: Ազատ կարողանում են կարծիքներ արտահայտել,բանավիճել, տրամաբանել:

Խմբավորման մեթոդը ընտրեցի, քանի որ մեթոդը խրախուսում է աշակերտներին ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջը:

Կազմակերպելով խմբավորման մեթոդը կփորձեմ նրանց մոտ ուժեղացնել նախ՝ թիմային աշխատանքը, երկրորդ՝ անկաշկանդ մտածել և արտահայտվել, բանավիճել, սխալվել և գալ եզրահանգումների, ցուցաբերել հարգանք և անաչառ, անհատական ու ինքնագիտակից մոտեցում ավանդույթների և հասարակական համակեցության կանոններին,կարողանալ ճանաչել իր դերը և պատասխանատվությունը ընտանիքում: Իմ նպատակն է աշակերտի մոտ ձևավորել ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն:

3.2 Փորձարարական դաս 1

«Զորավոր է այն ազգը, որն ունի զորավոր ընտանիքներ: Ազգերի զորությունը ընտանիքների մեջ է»:

Հատված Գևորգ Մարզպետունի պատմավեպից

Նոր դասը սկսեցի հարցադրումով. «Տվե՛ք ընտանիքի Ձեր սահմանումը»: Լսվեց տարբեր պատասխաններ:

Այսօրվա դասի թեման է « Ընտանիքի տեսակներն ու գործառույթները»: Նախ թեման սկսեցի նահապետական ընտանիքը ներկայացնելուց: /5-7րոպե/

Նահապետական ընտանիքներում սերունդները հետևում էին իրենց նահապետների սահմանած օրենքներին, որոնք էլ պարտավոր էին փոխանցել դրանք իրենց սերունդներին: Գերդաստանի բոլոր անդամները պարտավոր էին իրենց բոլոր արարքների համար հաշիվ տալ նահապետին, սակայն ինքը՝ նահապետը, հաշվետու չէր ոչ ոքի առաջ: Իսկ գերդաստանի խնդիրները և հարցերը լուծելու համար նահապետը խորհրդակցում էր այլ տարեց տղամարդկանց հետ: Ճաշելիս նահապետը միշտ նստում էր սեղանի գլխին և առանց նահապետի ոչ ոք իրավունք չուներ սեղանի շուրջ նստել: Կնոջ գլխավոր դերը մայրությունն էր և երեխաների դաստիարակությունը: Հղի կինը և մայրը բոլոր ժամանակաշրջաններում եղել են պաշտամունքի առարկա: Նահապետի կնոջ պարտքն էր հարսներին սովորեցնել ինչպես գերդաստանի ավանդույթներն ու պատմությունը, այնպես էլ ազգային մշակույթը, ծեսերը և ավանդույթները: Թեև նահապետի կնոջ իշխանությունը տարածվում էր հիմնականում իգական սեռի ներկայացուցիչների և երեխաների վրա, սակայն նա հարգված էր ընտանիքի բոլոր անդամների կողմից: Հենց նա էր հանդիսանում նահապետի խորհրդականն ու անդորրը հսկողը:

Հակիրճ ներկայացրի նաև ժամանակակից ընտանիքը:

Օտար բարքերի անարգել թափանցումը Հայաստան, դեռևս ոչ լիարժեքորեն ձևավորված հասարակական հարաբերությունները, ընտանիքի վերաբերյալ ազգային բովանդակությամբ պետական օրենքների անբավարարությունը, ժամանակակից հայ ընտանիքին կանգնեցրել են մի շարք լուրջ խնդիրների առջև, որոնք խորը մտահոգության տեղիք են տալիս: Պատճառը հանդիսանում է ազգային արժեհամակարգի փոփոխությունը: Ժամանակակից հայ
հասարակության մեջ ընտանիքը ենթարկվում է որոշակի փոխակերպումների. երիտասարդները գերադասում են ամուսնանալ ավելի ուշ տարիքում, ունենում են ավելի քիչ երեխաներ և մեծ ընտանիքներում ապրելու սովորույթը սկսում է տեղի տալ, քանի որ

երիտասարդները դառնում են տնտեսապես անկախ:

Իմաստի ընկալման ժամանակ դասը հակիրճ ներկայացնելուց հետո, դասարանը բաժանեցի երկու խմբի՝պահպանողականների և ազատականների:

Վերադասավորվելուց հետո բաժանեցի նախօրոք պատրաստած հարցաթերթիկներ և տվեցի ժամանակ/10-րոպե/: Ընթացքում մոտեցա խմբերին, որոնք բուռն քննարկում էին: Ժամանակը լրանալուն պես, բարձրաձայնեցին հարցերը և անցան քննարկման: Քննարկման ժամանակ երկու խմբերի միջև եղավ և՝ անհամաձայնություններ և՝համաձայնություններ: Այնուհետև գրատախտակին կախեցի թեմային վերաբերող նկարներ, որտեղ պետք է ցույց տան դրական և բացասական կողմերը/3-5րոպե/, որոնցից երկուսը ներկայացված է ստորև /Տես նկար 1 և նկար 2/:

Նկար2: Ժամանակակից ընտանիք

Նկար 2: Նահապետական ընտանիք

Ստորև ներկայացված է հարցման արդյունքում ստացված տոկոսային հարաբերակցությունը:



- 78% - ժամանակակից ընտանիքի

  կողմնակիցներ

- 22% - Նահապետական ընտանիքի

  կողմնակիցներ

Հարցումից հետո, գրատախտակին գրեցի մի քանի խորհուրդներ ընտանիքի վերաբերյալ.

- Հարգեք ինքներդ Ձեզ և նույն հարկի տակ ապրող մարդկանց
- Կարողացեք ընդունել Ձեր սխալները
- Եղեք ուշադիր ընտանիքի անդամների նկատմամբ
- Մի կենտրոնացեք ընտանիքի անդամների թերությունների վրա
- Հանդուրժող եղեք ընտանիքի մյուս անդամների հետաքրքրությունների նկատմամբ
- Վստահեք նրանց:

3.3 Փորձարարական դաս 2

8-րդ դասրանում դասի թեման է «Մարդու պահանջմունքները», /դասապլանը տեղադրված է հավելված բաժնում/:

Դասաժամը սկսվեց կազակերպչական աշխատանքներով և տրվեց հարցեր դասապրոցեսին ներգրավելու նպատակով: Հարցերին պատասխանելուց հետո, Padlet-ի միջոցով ներկայացվեց նյութը: Ավարտելուն պես կատարվեց հարցադրումներ. Գլխավոր նպատակը պարզել պահանջմունքը կարիք է, թե՞ այն ձգտում է բավարարման, որը որոշում է մարդու ընտրությունը, կյանքի ոճը:
Տեսանյութում ներկայացվեց Մասլոուի գաղափարական բուրգը և գրատախտակին գծեցինք պարզելու թե՞, որն է մարդու առաջնահերթ պահանջմունքները:
1. կենսաբանական պահանջմունք – ուտել,խմել, հագնվել և այլն

2. անվտանգության և ապահովության պահանջմունք – ընտանիքի, առողջության
3.սոցիալական պահանջմունք – ընկերներ ունենալու, սիրահարվելու

4.հարգանքի պահանջմունք - իրեն հարգելու,արժանապատվության

5.ինքնադրսևորման պահանջմունք - լինել ճանաչված,գրավել դիրք և այլն:



Աշակերտները քննարկելով այս գաղափարները հասակացան, որ հիմնականում այս պահանջմունքներն են դրդում մարդուն, որ սովորի, աշխատի, սիրահարվի կամ ձգտի դառնալ լավագույնը:

Եթե առաջին դասին աշակերտները խոսում էին նյութական և հոգևոր պահանջմունքների մասին, ապա երկրորդ դասին աշակերտները ավելացրեցին նաև սոցիալական պահանջմունքը և կարևորեցին ուրիշ մարդկանց հետ շփվելը, նրանց դրական վերաբերմունքը ու սերը, հարգանքին արժանանալու կարիքը:

Կշռադատման փուլում 7 –րոպե կիրառեցինք Kahoot – ը, ստուգելու համար թե որքանո՞վ են հասկացել:Աշակերտները մեծ հետաքրքրությամբ և ոգևորությամբ միացան ծրագրին և պատասխանեցին նախօրոք կազմած հարցերը:
Անդրադարձ կատարելու համար օգտագործեցինք learningapps գործիքը և վերջում տրվեց տնային աշխատանք՝ կարդալ դասագրքում զետեղված երեխայի իրավունքների մասին << օրենքի հոտնյալ հոդվածները և նշել թե ինչպիսի՞ պահանջմունքների բավարարմանն են ուղղված:

Փորձարարական դաս 2-ի արդյունքները
Հոգևոր պահանջմունքներ
Նյութական պահանջմունքներ
Նյութական և հոգևոր պահանջմունքներ
35%
43%
22%

4.Վերլուծություն

Աշակերտների մոտ արժեքային համակարգ ձևավորելու համար անցկացվեց երկու տարբերակված դասեր:Իմ նպատակը այն էր, որ աշակերտները հասկանան,անձի ձևավորման համար կարևոր դեր ունի սոցիալական ու բնական միջավայրը, ընտանիքը, դպրոցը հասարակական հարաբերություններն ու արժեքները:

Մասնավորապես Վ. Ա. Սուխոմլինսկին գրում էր. «Կրթված մարդկանց իսկական դաստիարակությունն ամենից առաջ մարդու, նրա հերոսական ոգու, հայրենիքին անսահման նվիրվածության, համոզմունքներին հավատարմության, հանուն մարդու երջանկության և մտքի բոլոր հարստություններին տիրապետելու պատրաստակամության և հմտության իմացությունն է»: Իհարկե, այստեղ մեծ մանկավարժը հիմնականում նկատի է ունեցել դաստիարակվածությունը, որը բովանդակում է հետևյալ որակների առկայությունը, բարությունը և հոգատարությունը շրջապատի նկատմամբ (մարդկանց, բնության, կենդանիների, հոգևոր արժեքների), ճշմարտագործությունը (խոսքի ու գործի), ազնվությունը(վարքի և գիտակցության), պատասխանատվությունը (գործի, մարդկանց, պարտականությունների), երախտագիտությունը (ծնողի, հարազատի, հայրենիքի նկատմամբ), նվիրվածությունը և այլն: Այս բոլոր որակները միաժամանակ բնութագրվում են որպես բարոյական դաստիարակության խնդիրներ, ուստի պատահական չէ, որ դաստիարակվածության մակարդակը բնութագրելիս օգտագործվում է«բարոյական է և առաքինի» բառակապակցությունը:

Բարոյական դաստիարակությունն արտահայտում է դաստիարակության նպատակների ու բովանդակության ամբողջության կարևորագույն ուղղություններից մեկը: Բարոյական դաստիարակության իրականացման ոլորտ են դպրոցները և մյուս ուսումնական հաստատությունները, որպիսիք մատաղ սերնդի բարոյականային որակների ձևավորման նպատակով կազմակերպում էին դեռևս նախքան Քրիստոսի ծնունդը: Հին հունական ագելլաներն ու հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը լույս տեսած գեղարվեստական ու մանկավարժական գրականության գերակշիռ մասը վերաբերում է բարոյական դաստիարակությանը: Եվ այսպես, դպրոցները, հնուց անտի, որպես բարոյական դաստիարակության իրականացման օջախներ են: ՀՀ կրթության օրենքը սահմանում է. «Կրթության բնագավառում պետական

քաղաքականության հիմքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է»: Միաժամանակ նշենք, որ հանրակրթական դպրոցի օրինակելի կանոնադրությունը ևս կարևորում է սերնդի բարոյական դաստիարակության խնդրի լուծումը. «Դպրոցը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի,

հասարակության և պետության, ապահովում է անհատի բազմակողմանի զարգացումը...»:
Ըստ այդմ էլ բարոյականության համակարգային հիմունքները կարելի է խմբավորել.

- ♦անձնային-անհատական որակներ,
- ❖ հասարահայնորեն արժեքավորված(առաջարկված) որակներ,
- ❖ վարքային բարոյական որակներ(կարողություններ),
- ♦ ավանդույթասովորույթային որակներ:

Եզնիկ Կողբացին գրում է «...Եվ ա՜րդ ինչպե՞ս ի հայտ կգար գործերի ընտրումը, եթե մարդըչունենար երկակի՝ ենթարկվելու և չենթարկվելու իրավունք: Ուրեմն պարզ է, որ մարդն ազատակամ եղավ կատարելու բարին կամ ձգտելու դեպի չար»[5]:

Ի դեպ, բարոյական դաստիարակության առանձնակի կարևորությունը զգացվում է հատկապես նախազորակոչային երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգում: Սա բացատրվում է նրանով, որ հայրենասիրության դաստիարակությունը համարվում է բարոյական դաստիարակության կարևորագույն խնդիր մի կողմից, իսկ մյուս կողմից վաղվա զինվորը, հայրենիքի պաշտպանը պետք է ունենա կայուն բարոյականային որակներ: Այն դեպքում, երբ ծնողներն օգնում, խրախուսում, նպաստում են երեխայի՝ որպես լիարժեք մարդ ինքնահաստատվելու ձգտմանը և գործընթացին, օգնում են նրան կողմնորոշվելու, թե ինչպես պիտի լինի «մեծը» (լիարժեք մարդը), ընդունում են նրան որպես «հավասար», այսինքն լիարժեք մարդ, հաշվի են նստում նրա հետ, բարձրացնում են ինքնագնահատականը, ապա երեք տարեկանի ճգնաժամն ընթանում է մեղմ առանց սուր ճգնաժամային ախտանշանների, ծնողների հետ կոնֆլիկտների: Երբ ծնողները պատնեշում են երեխայի ինքնահաստատման ձգտումները և գործընթացը («չի կարելի այսպես կամ այնպես անել», «հանգիստ մնա» և այլն), չեն խրախուսում նրա «մեծ» երևալուն ուղղված վարքը, չեն կողմնորոշում նրան, թե ինչպես պետք է իրեն պահի մեծը (լիարժեք մարդը), չեն ընկալում նրան որպես լիարժեք մարդ ու հաշվի նստում նրա հետ, իջեցնում են ինքնագնահատականը, ապա ճգնաժամը սուր ընթացք է ստանում: Դաստիարակության բովանդակությունը մեծապես պայմանավորված է անձի, նրա զարգացման և կենսագործունեության մասին դաստիարակողի պատկերացումներով, ինչպես նաև այն արդյունքով, որ դաստիարակողը սպասում է իր դաստիարակությունից: Յուրաքանչյուր ծնող իր պատկերացումներն ունի այն մասին, թե ինչ է նշանակում լավ մարդ, ինչպես է երեխան զարգանում և ինչ արդյունք է ինքն ուզում ունենալ իր դաստիարակությամբ: Ելնելով շարադրվածից, կարելի է ընդհանրացնել, որ զարգացման ճգնաժամերի առաջացման կարևորագույն պատճառներից մեկն այդ շրջաններում դաստիարակության և զարգացման օրինաչափությունների անհամապատասխանությունն է՝ դաստիարակությունը հաշվի չի նստում այն խմորումների հետ, որ տեղի են ունենում ճգնաժամային շրջաններում. Կրթության դաստիարակության ռազմավարություն մշակող գիտնականները կանգնած են մի փաստի

առաջ. ճգնաժամային իրավիճակներում անհատի արժեքային կողմնորոշիչներն անընդհատ փոփոխվում են:

Հասարակության անցումային փուլը հաղթահարող կրթական հանրության հիմնախնդիրներից մեկը՝ նյութական և հոգևոր արժեքների վերաիմաստավորման, վերագնահատման գործընթացի ազդեցությունն է մարդու սոցիալականացման և դաստիարակության վրա: Մանկավարժները պետք է հաշվի առնեն, թե ինչ մեծ ազդեցություն ունի անհատի արժեքային կողմնորոշիչների վրա նյութական արժեքների թերագնահատումը կամ գերագնահատումը: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է հիշել, որ հոգևոր արժեքները կարող են դրական ազդեցություն ունենալ նյութական արժեքների վերագնահատման, վերաբաշխման վրա բարեգործություն, մեկենասություն և հակառակը՝ նյութական արժեքներն իրենց հերթին կարող են ազդել հոգևոր արժեքների ձևավորման վրա, շատ փողի առկայությունը կարող է հանգեցնել հոգևոր անկման: Այսպիսով, մանկավարժների համար առաջնային խնդիր է դառնում նյութական և հոգևոր արժեքների ձևավորման ռազմավարության մշակումը՝ թե° դաստիարակության, թե° սոցիալական միջավայրում:

Իմ անցկացրած երկու փորձարարական դասերը մեծ ակտիվություն ապահովեց աշակերտների մոտ,ստիպեց,որ մտածեն իրենց քայլերի,հարաբերությունների և ապագայի մասին:

[5] Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Ե., 1970թ., էջ 49

Գրականություն

1. Խ. Աբովյան, ԵԼԺ , Երևան 1956, հ.7, էջ 174:
2. Անաստասյան Բ. Հ. Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, Ընտանիք և ազգային հոգեբանություն նյութերի ժողովածու, Եր., ՀՀ լուսավորության նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ,1991, 149 էջ:
3. Кон И. С. Психология старшекласника. М. Просвещение,1980, 389с.
4. Դոլուխանյան Ա. Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն,Եր., «Զանգակ–97», 2008, 268 էջ
5. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան– Զոն, 2011, 160 էջ:
6. Ղարիբջանյան Օ. Բ., Ժողովրդական ավանդույթները դպրոցականներիբարոյական դաստիարակության գործոն, Եր., «Լույս », 1978, 65 էջ:
7. Շավարշյան Ա. Մ., Հայ մանկավարժներ. Երևան, 1958, հ. 1-2, 617 էջ:
8. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Ե., 1970թ., էջ 49
9. ՀՀ օրենքը զինապարտության մասին, 16.09.1998թ., հոդված 8

Հավելված

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Արփիկ Ռամազյան

Առարկա՝	Հասարակագիտություն	20.07.2022թ.	Կիսամյակ	I	Դասարան	10
Խմբի բացվածք՝	Աղջիկ: 17 Տղա:12					
Թեմա՝	Ընտանիքի տեսակներն ու գործառույթները					
Օգտագործվող Նյութեր՝	Պաստառ,կավիճ,գրատախտակ,գրիչներ,դասագիրք,նկարներ,					
Ամբողջական պատկեր՝	8-րդ դասարանում քննարկել ենք « Ընտանիք և ազգ»թեման:Մեկ անգամ ևս կրկնեցինք:Աշակերտները սահմանեցին ընտանիքը որպես յուրահատուկ սոցիալական խումբ,թվարկեցին ընտանիքի տեսակները: 10-րդ դասարանում պետք է սովորեն ընտանիքի և նրա գործառույթների, զուգընկերոջ ընտրության մեխանիզմների, ամուսնության և ամուսնալուծության մասին:					
Դասի նպատակը՝	.թվարկել ժամանակակից ընտանիքների տեսակները, .դասակարգել ըստ կառուցվածքի և գործառույթների, .նկարագրել ընտանիքի զարգացման դինամիկան, ճգնաժամային փուլերը:					

Ուսուցման փաստեր,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա՝ •դասակարգել ընտանիքի տեսակները ըստ կատուցվածքի •նկարագրել հայ նահապետական ընտանիքի ազգային հոգեբանությունը •վերլուծել ընտանեկան դերերը ժամանակակից հայ ընտանիքում •մեկնաբանի ապագա զուգընկերոջ ընտրության սկզբունքները

Գործողություններ Ժամ/ տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Պլանավորած տարբերակում Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
Մուտք,ներկա- բացակա/3րոպե/ Սկիզբ/5 -7րոպե/ Ընթացք/Իմաստի ընկալում 15- 20րոպե/	Բացել դասագրքերը, կրկնել դասը: Ներկայացնել տնային աշխատանքները Լսում են ուսուցչին,պատասխանում են հնչեցրած Աշակերտները բաժանվում են 2 խմբերի՝ պահպանողակ աններիև ազատականների .Կատարում են առաջադրանքն երը	Ողջունել դասարանին,կատարել հաճախումների ստուգում,ամփոփել նախորդ փորձարարական դասի արդյունքները ,ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը, Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին աշխատելիս	1.Տվե՞ք ընտանիքի Ձեր սահմանումը 2.Ինչպիսի՞ դեր ունի ընտանիքը Ձեր կյանքում ժամանակակից աշխարհում, այդ թվում նաև Հայաստանում,այսօր ընտանիքներ ը հիմնականում միջուկայի՞ն են՞ .Ինչպիսի՞ առավելություններ և սահմանափակումներ ունի նահապետական և ժամանակակից ընտանիքները: Քննարկեք	Մտագրոհ

7-10рոպե	Յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իր աշխատանքը Հետազոտվող աշակերտները լրացուցիչ հետաքրքիր նյութեր ներկացրեցին	Կատարեց ուղղորդող հարցադրումներ Խրախուսեց աշակերտներին: Գրատախտակի նգրվեց խորհուրդներ:	դերային հարաբերություններները ժամանակակից և նահապետական ընտանիքներում: .Քննարկեք ներման երևույթն ընտանեկան փոխհարաբերություններում: Քննարկեցին հարցերը,փոխվեցին դիրքորոշումներ,գնահատեցին նընտանիքի դերը:	
Անդրադարձ-3րոպե Տնային աշխատանք-2րոպե		Սովորել դասը և նկարագրեն ընտանիքի զարգացման դինամիկան,մեկնաբանեն ճգնաժամային փուլերը:		

Հավելված

Դասապլան 2 Ուսուցիչ՝ Արփիկ Ռամազյան

Առարկա՝	Հասարակագիտություն	20.07.2022թ.	Կիսամյակ	1	Դասարան	8
Խմբի բացվածք՝	Աղջիկ՝12, տղա՝11					
Թեմա՝	Մարդու պահանջմունքները					
Օգտագործվող Նյութեր՝	ՏՀՏ գործիքներ՝ LearningApps, Kahoot! Padlet Թուղթ,գրիչ,դասագիրք					
Ամբողջական պատկեր՝	Երկու ժամով հատկացված դասը II ժամում անցկացրի ՏՀՏ կաբինետում:Աշակերտները գիտեն հոգևոր և նյութական պահանջմունքների մասին ,իսկ նոր դասին ամրապնդենք ՏՀՏ գործիքներով:					
Դասի նպատակը՝	.Նկարագրի մարդու պահանջմունքները: .Իմանա և տարբերակի նյութական և ո՞չ նյութական պահանջմունքների նշանակությունը իր և հասարակության կյանքում: .Ձևավորել ֆինանսները վերահսկելու մշակույթ: Անկախ տարիքից գործ ունենք փողի հետ, ուստի պետք է ունենալ գիտելիք, հմտություն, վերաբերմունք և վարքագիծ, որոնք կնպաստեն անձի արդյունավետ և պատասխանատու որոշումների կայացմանը:					

Ուսուցման փաստեր,որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	•կարողանա հավասարակշռել և ներդաշնակել իր զգացմունքները,ցանկությունները,կարիքները,նպատակները և հակումները.բացահայտել սեփական անձը. •Ճանաչի ֆինանսական ոլորտում քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները.

Գործողություններ Ժամ/ տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
Մուտք,ներկա- բացակա/3րոպե/ 5 րոպե Ընթացքը՝/20-25րոպե Իմաստի ընկալում/10 րոպե/ Կշռադատում	Բացել դասագրքերը, կրկնել դասը: Ներկայացնել տնային աշխատանքները Լսում են ուսուցչին,պատասխանում են հնչեցրած հարցերին . Աշակերտներ ը ուշադիր և հետաքրքրությամբ լսում են ուսուցչին Աշակերտները համակարգիչներով միացել են և պատասխանում են նախօրոք կազմած հարցերին:	Ողջունել դասարանին,կատարել հաճախումների ստուգում,ամփոփել նախորդ դասի արդյունքները ,ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը, Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Padlet-ի միջոցով ներկայացրի նյութը https://ru.padlet.com/ram azjana1968/phnja545 wm6eby5p Կատարեց ուղղորդող հարցադրումներ Խրախուսեց աշակերտներին: https://create.kahoot.it/details/516d895d-b124-413a-9c59-9863e6968d8f	.Ի՞նչ է պահանջմունքը: Հնարավո՞ր է պահանջմունքներ չունենալ: Մասլոուի պահանջմունքների բուրգը գծելև բացատրել	Մտագրոհ

փուլում /5-7 րոպե/ Գնահատման համար կիրառվեց/10-րոպե/		413a-9c59-9863e6968d8f https://docs.google.com/forms/d/1FRzl_TQyrl35oUGxqb-x105sT_2ON_AKqRv6hWN3Tl4/edit		
Անդրադարձ-8-րոպե Տնային աշխատանք-2րոպե		https://learningapps.org/display?v=pvoaxpvrk21 Կարդալ երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի հետևյալ հոդվածները և նշել թե ինչպիսի՞ պահանջմունքների բավարարմանն են ուղղված:		